ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության մասին

2025 թվականի հուլիսի 22-ին և 23-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» (այսուհետ՝ Ծրագիր) վարկային համաձայնագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 120,500,000 եվրո, որից՝ 96,400,000 եվրոն վարկային միջոցներն են, իսկ 24,100,000 եվրոն՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը: Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ է նախատեսվում վերջինիս ստորագրման ամսաթվից հետո 180 (հարյուր ութսուն) օրը: Ծրագրի ավարտի ժամկետ է սահմանվում 2030 թվականի օգոստոսի 31-ը, իսկ վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետ՝ ավարտման ժամկետից չորս ամիս հետո՝ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի ընդհանուր համակարգման և քաղաքականության աջակցության պարտականությունները կպատվիրակվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, իսկ Ծրագրի իրականացումը՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

Մինչ Ծրագրի մեկնարկը, վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու նախապայման է հանդիսանում ՀՀ Վարչապետի որոշմամբ Ծրագրի կառավարման կոմիտեի ստեղծումը՝ Ծրագրի իրականացման վերահսկման և միջգերատեսչական համակարգման համար: Այն կնախագահի ոլորտը համակարգող փոխվարչապետը, իսկ կազմի մեջ կընդգրկվեն համապատասխան նախարարությունների, պետական, տեղական և մարզային մարմինների ներկայացուցիչներ: Կոմիտեի աշխատանքը կկազմակերպի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, իսկ դրա կազմը և գործունեության կարգը կնշվեն աշխատակարգում և Ծրագրի գործառնական ձեռնարկում: Բացի այդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ՝ Ծրագրի օպերատիվ համակարգման, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հիմնադրամի արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով:

Ծրագրի նպատակները և համառոտ նկարագիրը

Ծրագիրը նպատակ ունի մեծացնելու Հայաստանի զբոսաշրջության ներուժը՝ երկրի մի քանի մարզերում թիրախային ենթակառուցվածքային և «փափուկ» ներդրումների իրականացման միջոցով: Մասնավորապես՝ Ծրագիրը կօժանդակի զբոսաշրջության առանձնացված կլաստերներից յոթին՝ խթանելով գինու, առողջարանային, արկածային, մշակութային, կրթական և էկոզբոսաշրջությունը Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերում: Ծրագրի առանցքում կլինեն այս կլաստերների հետ զբոսաշրջիկների կապն ապահովելը և զբոսաշրջային վայրերի ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ներդրումները: Ծրագիրը նաև համահունչ է Համաշխարհային բանկի՝ առանձնացված զբոսաշրջային կլաստերներում մասնավոր կապիտալի ներգրավումը խթանելու մոտեցմանը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ 4 բաղադրիչներից՝

<u>Բաղադրիչ 1. Կլաստերների ինտեգրված և կայուն զարգացման խթանում</u>.

- Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի և Եղեգիսի համար կլաստերային զարգացման ծրագրերի մշակում և ամփոփում:
- Կլիմային և աղետներին դիմակայուն գոտիավորման պլանների և գլխավոր հատակագծերի մշակում, ներդրումների պլանավորման նպատակով ուսումնասիրություններ և այլ վերլուծական աշխատանքներ:
- Հանրային իրազեկման արշավների և դրանց հետ կապված քաղաքացիների ներգրավման միջոցառումների իրականացում կլաստերային զարգացման ծրագրերի նախապատրաստման ընթացքում և Ծրագրի ղեկավարման կոմիտեի կողմից կլաստերային զարգացման ծրագրերի հաստատումից հետո:
- Մշակութային ժառանգության օբյեկտների համար կառավարման պլանների և զբոսաշրջային առանձին ակտիվների համար շահագործման և պահպանման պլանների մշակում, որը թույլ կտա ապահովել զբոսաշրջային ակտիվների երկարաժամկետ պահպանումն ու մշտադիտարկումը:
- Հարցումների անցկացում և զբոսաշրջային տվյալների ստացման այլ միջոցառումների իրականացում:
- Արենիի, Դիլիջանի, Եղեգիսի և Ջերմուկի կլաստերներում զբոսաշրջային կենտրոն՝ ուղղություն կառավարող գրասենյակների ստեղծմանն աջակցում՝ ուսուցման և կարողությունների զարգացման, ապրանքների և սարքավորումների տրամադրման միջոցով:
- Առաջնորդության հմտությունների զարգացման դասընթացներ և տեղական մակարդակում կանանց մասնակցության խթանում:

<u>Բաղադրիչ 2. Աջակցություն կլիմայակայուն ենթակառուցվածքներին և տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում</u>: Այն իր հերթին բաղկացած է երկու ենթաբաղադրիչներից՝

Ենթաբաղադրիչ 2.1 Ենթակառուցվածքների և ծառայությունների վերականգնում և արդիականացում: Այս ենթաբաղադրիչով կֆինանսավորվի խորհրդատվական ծառայություններ և շինարարական աշխատանքներ՝ ուղղված հիմնական և զբոսաշրջությանը վերաբերելի ենթակառուցվածքների բարեկարգմանն ու քաղաքների արդիականացմանը՝ զբոսաշրջային վայրերի և շրջակա տարածքների հասանելիությունը բարելավելու համար:

Ենթաբաղադրիչ 2.2. Մասնավոր հատվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների կատարելագործումը և աշխատատեղերի ստեղծման հնարավորության ընձեռումը կֆինանսավորեն կլաստերների խթանմանն ուղղված խորհրդատվական աշխատանքները և տեղական ընկերությունների և անհատների մասնակցության ընդլայնումը զբոսաշրջության ոլորտում՝ հանուն տեղական տնտեսական զարգացման:

<u>Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում և գործառնական աջակցություն</u>.

Այս բաղադրիչով կֆինանսավորվեն ծրագրի կառավարման ընդհանուր ծախսերը, այդ թվում՝ գործառնական ծախսերը, խորհրդատվական և ոչ խորհրդատվական ծառայությունները, ավտոտրանսպորտային միջոցները, հաղորդակցությունը, իրազեկումը, աուդիտները և

ուսուցումը: Այն կֆինանսավորի ծրագիրն իրականացնող կառույցի ծախսերը՝ իրականացնելու ծրագրի կառավարման գործառույթները և ապահովելու ծրագրի միջոցառումների համապատասխանությունը բնապահպանական, սոցիալական, ֆիդուցիար և տեխնիկական ստանդարտների, մոնիտորինգի և գնահատման և հաշվետվությունների ներկայացման հետ:

<u>Բաղադրիչ 4. Արտակարգ իրավիճակների արձագանքման պայմանական բաղադրիչ</u>.

Այս բաղադրիչը նախատեսվում է առանց ֆինանսական միջոցի: Այն Ծրագրի՝ որպես պարտավորություն չձևավորված միջոցներն են, որոնք աղետների (երկրաֆիզիկական, կլիմային առնչվող կամ մարդածին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների ժամանակ ֆինանսական միջոցների արագ վերաբաշխելու հնարավորություն են ընձեռում՝ առկա հրատապ կարիքները հասցեագրելու համար: Նման դեպքերի թվում կարող են լինել՝ ջրհեղեղները, երկրաշարժերը, երաշտները, անտառային հրդեհները և հիվանդությունների բռնկումները:

Ծրագրի շահառուները

Ծրագրի շահառուների թվում են տարեկան նվազագույնը 180,000-ից ավելի բնակիչ և 750,000-ից ավելի զբոսաշրջիկ (ներքին և միջազգային), ում համար հասանելի կլինեն Ծրագրի տարածքում քաղաքային ենթակառուցվածքի բարելավված ծառայությունները և բարձր գրավչությամբ զբոսաշրջային առաջարկները: Պետական կառավարման համակարգը կշահի պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման շնորհիվ, ինչն ակնկալվում է ավելացված արժեքի հարկի մուտքերից: Նաև նոր և ավելի լավ աշխատատեղեր կստեղծվեն ծրագրի տարածքներում, որոնք ակնկալվում է, որ շահեկան կլինեն բնակիչների և աշխատողների համար՝ զբոսաշրջային արժեշղթայում ապահովելով եկամուտների գոյացման և մասնագիտական զարգացման հնարավորություններ:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Ծրագրի իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N1363-Ա որոշման «2.5. Զբոսաշրջություն» բաժնի պահանջներից և Հայաստանի Հանրապետության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 10–րդ կետով նախատեսված «Զբոսաշրջության զարգացում» նպատակի իրականացման համար նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը և զբոսաշրջության զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրի վավերացումը համարվում է նպատակահարմար: